

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԻ kumemuše ԵՎ BE.LI ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

BE.LI-ն ուրարտական արձանագրություններում հանդիպում է հաճախ: Սակայն սոսկ երկակի այն հիշատակվում է kumemuše բառի հետ փոխկապակցված: Եվ եթե BE.LI-ն մասնագիտական գրականության մեջ վաղուց ի վեր նույնացված է ասորեստանյան bēlu II-ի հետ¹, ապա kumemuše բառիմաստի բացահայտումը տակավին շարունակում է մնալ ուրարտերենի բառապաշարի պրոբլեմատիկ խնդիրների շարքում:

Ի դեպ ուրարտական սեպագիր աղբյուրների փաստական նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ kumemuše-ի և BE.LI-ի փոխկապակցված հիշատակվելու իրողությունը բոլորովին էլ պատահական երևույթ չէ: Դա կոչված է ըստ ամենայնի բացատայտելու ոչ միայն kumemuše-ի նշանակությունը, այլև ուրարտերենում առայժմ անհայտ այդ բառի և վաղուց հայտնի BE.LI-ի փոխհարաբերությունը:

Եվ, այսպես, kumemuše-ն և BE.LI-ն համատեղ հիշատակվում են սոսկ Ռուսա II-ի Արծկե-Աղիլջևազի և Կարմիր-բուրի պալատավոր իդենտիկ արձանագրություններում: Առկա նյութի քննարկման համար նպատակահարմար ենք գտնում հենց սկզբից ստորև ներկայացնելու հիշյալ սեպագիր տեքստերի kumemuše և BE.LI բառերի հետ առնչվող հատվածների գիտական տառադարձումը: Ի դեպ, դրանց համատեղ ցուցադրումը կարևոր է, մի կողմից, տեքստերի պալատավոր հատվածների փոխադարձ վերականգնումների, մյուս կողմից, նրանցում առկա փաստական նյութի առայժմ աննկատ մնացած որոշ տարբերակների քննարկման ընթացքում հետամուտ լինելու համար: Սհա այդ հատվածները:

1. ...^mRu-sa-a-še a-li a-lu-še KÛ ku-me-mu-še BE.LI SIKIL ^dHal-di-<na-ni KÁ ha-ú-li> NA₄ 'a-hu-li-i-ni a-li-e a-še su-nu-e i-ru-i-du-l<i ku-me-mu-še GIŠ> a-mu-li-ni KITM-a qu-ul-di-ni-ni a-li-e KÛ iš-ti-ni ma-nu-l[i te-er-du-li-ni É?]²

2. ...^mRu-sa-a-še <a-li a-lu-še KÛ ku-me-mu>-še BE.LI SIKIL ^dHal-di-na-ni KÁ ha-ú-li <NA₄ 'a-hu-li-i-ni a-li-e> a-še su-nu-e i-ru-i-du-li

ku-me-mu-še GIŠ ... <a>-mu-li-ni KITM-a qul-di-ni-ni a-li KÙ <iš-ti-ni ma-nu-li te-er>-du-li-ni ⁶a-du-nu-si-ni...³

Նախքան այս տեքստերի քննարկմանը անդրադառնալը, կարծում ենք, արժե հակիրճ երկու խոսք ասել kumemuše բառի առթիվ նրանց առաջին հրատարակիչների կողմից ցուցաբերված մոտեցումների մասին: Արծկե-Աղիլջևազի պակասավոր արձանագրության հրատարակիչ Պետեր Հյուլինը, օրինակ, նույնիսկ այդ բառի կապակցված ընթերցման վերաբերյալ վերջնական համոզմունք չի ունեցել, այդ պատճառով էլ արձանագրության զիտական տառադարձման մեջ այն արտահայտել է վանկագրերի տարանջատված ku me mu še եղանակով⁴:

Ինչ վերաբերում է սաղերիս հեղինակին, ապա նա Կարմիր-բլուրի իդեոտիկ արձանագրության նախնական հրատարակության ժամանակ հիշյալ բառի kumemuše կապակցված ընթերցման վերաբերյալ ոչ մի կասկած չի տածել, քանի որ այն վաղագրված է KÙ գաղափարագրի և BE.LI «զենք» բառի միջև: Սակայն անհրաժեշտ կովաններ չունենալու պատճառով kumemuše բառիմաստին մենք ստիպված չենք անդրադարձել⁵: Իսկ հետագայում, մեր նոր դիվանի հրատարակության մեջ, ընդամենը կոստել ենք, որ kumemuše-ն, ըստ երևույթին, ինչ-որ առարկայի անվանում է, որը հանդես է գալիս արձանագրություններում պաշտամունքային արարողությունների ժամանակ «զենքի» (BE.LI) հետ միասին⁶:

Այս հակիրճ նախաբանից հետո նշենք, որ Արծկեի և Կարմիր-բլուրի վերոհիշյալ պակասավոր արձանագրությունների ցիտված հատվածները, ցավոք, որոշակի ոչինչ չեն պարունակում ոչ kumemuše բառիմաստի, ոչ էլ BE.LI-ի հետ նրա ունեցած փոխառնչության մասին: Այդ արձանագրությունների տվյալների համաձայն, կարծես, մի կողմից kumemuše-ն, BE.LI-ի նման, ինչ-որ առարկա է և դրանց կողոպուտը Խաղյան տաճարից ձեռնարկողների նկատմամբ (aluše KÙ kumemuse BE.LI SIKIL ⁴Haldinani KÁ hašli) նախատեսվում է պատիժ: Մյուս կողմից, ընդհանուր առմամբ նկատել ենք, որ kumemuše-ն կրում է KÙ, իսկ BE.LI-ն՝ SIKIL գաղափարագիր մակդիրները:

Ի դեպ kumemuše բառիմաստի բացահայտման պարագայում որոշակի առաջընթաց նկատվեց վերջերս, երբ 2001թ. հրատարակվեց Ռուսա II-ի Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրությունը: Ինչպես արդեն հայտնի է, նրա հատվածներից մեկում առկա է Արծկեի և Կարմիր-բլուրի պակասավոր արձանագրությունների մեզ հետաքրքրող տեքստերի տարբերակը: Ահա այդ տեքստը.

3. ...^mRu-sa-a-še a-li a-lu-še KÙ TUKUL BE.LI SIKIL ⁴Hal-di-na-ni KÁ-ni ha-u-li-e NA₄ 'a-ḥu-li-ai a-li a-še su-nu-e i-ru-i-du-li TUKUL^{MES} GIŠ^{MES} ... a-li KÙ iš-ti-n[i] ma-nu-li te-er-du-li-ni ⁶a-du-nu-si-ni...⁷

Ռուսա II-ի Այանիսի նորահայտ և հիանալի պահպանված արձանագրության այս հատվածը, ինչպես դա ըստ ամենայնի ակնառու է, բավական շատ ընդհանրություններ ունի մյուս թագավորի Արծկեի KYKH, 415 և Կարմիր-բլուրի KYKH, 425 պակասավոր արձանագրությունների վերոհիշյալ հատվածների հետ: Երկու դեպքերում էլ կրկնվում են BE.LI SIKIL-ը և GIS-ը կամ GIS^{MES}-ը, գաղափարագիր GIBIL-ին փոխարինում է նրա ուրարտերեն *amulini* համապատասխանությունը, KITM-a-ին՝ ուրարտերեն *qura-a* և այլն: Սակայն, ցնցող նորույթը, այնուամենայնիվ, այստեղ հանդիսանում է Այանիսի նոր արձանագրության KՄ TUKUL BE.LI SIKIL-ը, որը փոխարինում է Արծկեի և Կարմիր-բլուրի իդենտիկ պակասավոր տեքստերի KՄ kumemuše BE.LI SIKIL տարբերակին: Հետևաբար, այս իդենտիկ արձանագրությունների համապատասխանությունը ամենևին կասկած չի հարուցում, որ Այանիսի արձանագրության գաղափարագիր TUKUL-ը (ասորեստանյան *kakku-u*) հանդիսանում է ուրարտերեն *kumemuše* անհայտ բառիմաստի բացահայտումը:

Ասեմք, որ ուրարտերեն *kumemuše* և շումերերեն TUKUL «զենք» համադրությունը մեր ուշադրությունը գրավել է դեռևս Այանիսի նորահայտ արձանագրության հրատարակությանը 2001թ. ծանոթանալու պահին: Սակայն KYKH, 415 և KYKH, 425 արձանագրությունների *kumemuše* (resp. TUKUL) և BE.LI զենքերի կողք-կողքի հիշատակվելու և մանավանդ նրանց KՄ և SIKIL զանազան մակդիրներ կրելու իրողությունը մեզ երկար ու ձիգ մտորելու տեղիք է տվել: Իսկ Սիրյո Սալվինին Այանիսի նորահայտ արձանագրության հրատարակության պահին այդ հարցին ամենևին չի անդրադարձել, այն դեպքում, երբ վերջերս *kumemuše-u*, TUKUL-ը և BE.LI-ն միանշանակ «զենք» (*arma*) է անվանում⁸: Այդ դեպքում ինքնին հարց է ծագում, թե եթե այդ զենքերի միջև իրող գոյություն չունի որևէ տարբերակում, ապա ի՞նչպես են նրանք կրկնակի հիշատակվում տեքստերում կողք-կողքի, կամ էլ ի՞նչու են կրում զանազան մակդիրներ՝ KՄ TUKUL կամ KՄ kumemuše, բայց BE.LI SIKIL:

Հետևաբար, արժե այժմ անդրադառնալ, մի կողմից, TUKUL-ի կամ ուրարտական *kumemuše*-ի KՄ և, մյուս կողմից, BE.LI-ի՝ SIKIL մակդիրների քննարկմանը:

Այսպես, շումերական TUKUL-ի կամ ուրարտական *kumemuše*-ի KՄ գաղափարագիր մակդիրը, որպես կանոն, շումերերենում մեկնաբանվում է «անմեղ»⁹: Իսկ շումերական TUKUL-ը, ինչպես հայտնի է, համապատասխանում է ակկադերեն *kakku*-ին, որը եթե Ռիկլե Բորգերը միանշանակ համարում է «զենք», ապա Վ. Ֆոն Ջոդենը այդ բառի առաջնային նշանակությունը համարում է «զավազանը», «ցուպը» և միայն երկրորդայինը՝ «զենքը»¹⁰:

Սակայն, եթե այս կամ այն չափով պարզ է *KÜ kumemuse* - *TUKUL*-ի հարցը, ապա շատ ավելի անորոշ և վիճելի է մնում առայժմ *BE.LI SIKIL*-ի խնդիրը: Ընդ որում, այդ անորոշությունը կապված է ոչ թե *BE.LI*-ի, այլ նրա *SIKIL* մակդիրի հետ: Վաղուց ի վեր հայտնի է, որ ուրարտական արձանագրությունների *BE.LI*-ին դա ասորեստանյան *belu II*-ն է և, *TUKUL*-ի ու *kumemuse*-ի մասն, զարմանալիորեն նույնպես «զենք» է նշանակում¹¹: Այդ դեպքում ինքնին հարց է ծագում, թե ի՞նչով են տարբերվում իրարից միևնույն տեքստերում կոդք-կոդքի հիշատակվող այդ *TUKUL-kumemuse* և *BE.LI-belu II* զենքերը:

Ի դեպ, եթե նկատի ունենանք, որ *kumemuse-TUKUL* զենքը, *KÜ* - մակդիրի համաձայն, «ամնեղ զենք» է, ապա այդ դեպքում *BE.LI* զենքի առանձնահատկությունը, թվում է, թե պետք է լուծի նրա *SIKIL* մակդիրը: Սակայն այստեղ խնդիրը ծայր աստիճանի բարդանում է այն հանգամանքով, որ ակկադերենի բառարանները փաստորեն անկարող են որոշակի պատասխան տալու այդ առեղծվածին: Ռ. Բոբզերի բառարանում, օրինակ, ստկա է երկու տեսակ *SIKIL*՝ իրենց *Ú* (*ŠAM*) և *NA*, դետերմինատիվներով, որոնք, հիշյալ դետերմինատիվների համաձայն, համապատասխանաբար անորոշ մեկնաբանվում են «ինչ-որ բույս» և «ինչ-որ քարատեսակ»¹²: Հետևաբար, պարզորոշ երևում է, որ այս *SIKIL*-ները ոչ մի առնչություն չունեն մեզ հետաքրքրող *BE.LI* «զենք» *SIKIL*-ի հետ:

ԳԺբախտաբար, շատ ավելի առեղծվածային է *SIKIL*-ի բացահայտման խնդիրը Վ. Ֆոն Ջոդենի ակկադերենի եռահատոր բառարանի I հատորում, որտեղ մեզ հետաքրքրող *SIKIL*-ը, չգիտես ինչու, նույնացվում է *KÜ*-ի հետ¹³: Հետևաբար, հայտնվում ենք այնպիսի անելանելի վիճակում, թե իբր մեզ հետաքրքրող երկու զենքերն էլ (և՛ *kumemuse-TUKUL*-ը, և՛ *BE.LI*-ն) հավասարապես ամնեղ զենքեր են: Այն դեպքում, երբ դա, համարձակ կարող ենք պնդել, ըստ ամենայնի բացառվում է:

Ինչպես հայտնի է, բոլոր նման կարգի առեղծվածային հանգամանքներում, որպես կանոն, օգնության են հասնում ուրարտերենի անհայտ բառապաշարի շուներական գաղափարագիր տարբերակների բացահայտումը: Հեռու չգնանք, հենց խնդրո առարկա ուրարտերեն *kumemuse* բառիմաստի բացահայտումը, ինչպես այդ մասին հիշատակվեց վերևում, տեղի է ունեցել սոսկ վերջերս՝ նրա շուներերեն *TUKUL* «զենք» տարբերակի առկայության շնորհիվ: Սակայն, ցավոք, շուներական *SIKIL* մակդիրը, տվյալ դեպքում հնարավորություն չի ընձեռում բացահայտելու *BE.LI-belu II* զենքի առանձնահատկությունը:

Այնինչ *kumemuse-TUKUL*-ի «ամնեղ զենք» (*KÜ kumemuse* կամ *KÜ TUKUL*) լինելու հանգամանքը, որը սեպագիր տեքստում փաստորեն հակադրվում է *BE.LI SIKIL* զենքին, ակամայից ի սկզբանե մեզ մղել է այն մտքին, որ վերջինս երեի ինչ-որ տեղ եղել է «մեղավոր», այսինքն՝

ռազմական գործողությունների ժամանակ գործադրվող զենք: Եվ այդ ուղղությամբ ձեռնարկված մեր երկարատև ու համառ պրպտումներից հետո, բարեբախտաբար, ի վերջո վրա է հասնում մվիրական արդյունքը. հայտնաբերվում է ուրարտական սեպագիր աղբյուրներում, սուկ մի անգամ Սարդուրյան ասորեգության եզրափակիչ սյունակում հիշատակված, BE.LI SIKIL-ի ուրարտական տարբերակը՝ BE.LI^{MES} gusušiniei «զենքեր մարտական»¹⁴: Իսկ դա, կարծում ենք, նշանակում է որ այս բացառիկ և ըստ ամենայնի ցնցող փաստի հիման վրա ակկադերենի բառարաններում երևի հետագայում հարկ լինի շումերական SIKIL-ը ուրարտերենի gusušiniei նրա տարբերակի հիման վրա համարձակորեն ստուգաբանելու որպես «մարտական»:

Ի դեպ հատկանշական է, որ «մարտական զենքը» (BE.LI gusušiniei), ի տարբերություն «անմեղ զենքի» (KÜ kumemuše), ուրարտական պաշտամունքային բնույթի արձանագրություններում հանդիպում է հաճախ, ըստ որում, կամ ամենուրեք փառաբանվում է, կամ էլ ուրարտական աստվածների և տաճարների հետ միասին, նրա պատվին ձեռնարկվում են խոշոր ու մանր եղջերավոր անասունների զոհաբերություններ: Այսպես, Իշպուինիի և Մեմուայի Քելիշինի KYKH, 30 երկլեզվյան արձանագրության ասորեստանյան տեքստում BE.LI-ն կրում է շումերական SIG, «հիմնալի» մակդիրը և Խալլյան տաճարին մատուցված առարկաների և կենդանիների թվարկման մեջ գրավում է առաջին տեղը: Ուրարտական BE.LI զենքը «հիմնալի» մակդիրով է հռչակվում նաև, այս անգամ արդեն ուրարտերեն gazuli բառով, Ռուսա II-ի Արծկեի KYKH, 415, Կարմիր-բլուրի KYKH, 425 և Այանիսի նորահայտ (Ayanis I, սեկցիա III) արձանագրություններում:

Այնուհետև, համատարած երևույթ է ուրարտական պաշտամունքային բնույթի արձանագրություններում կենդանիների զոհաբերությունները Խալլյան զենքերի (^dHaldinaue BE.LI^{MES}) պատվին: Այսպես, Իշպուինիի և Մեմուայի Աշտակերաի KYKH, 36 արձանագրության կրկնվող երկու տեքստերում էլ նորակառույց տաճարում (qudulanu šušinaš) զերագույն աստված Խալլիի, նրա կնոջ Վարուբանիի և Խալլյան տաճարի պատվին զոհաբերվելիք կենդանիների արարողության ժամանակ նույնքան մեծ պատիվ է մատուցվում նաև Խալլյան զենքերին: Նույնը պետք է ասել Իշպուինիի և Մեմուայի Սեերի դռան KYKH, 38 արձանագրության մասին, որում Խալլյան զենքերին և զոհաբերվում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Ի դեպ հատկանշական է, որ այստեղ Խալլյան զենքերը (^dHaldinaue BE.LI^{MES}) հիշատակվում են ուրարտական աստվածների թվարկման նույնիսկ սկզբնական հատվածում¹⁵, այն դեպքում, երբ Խալլյան զորքերին (^dHaldinaue LU A.SI^{MES}) մա-

առօցվելիք կենդանիների զոհաբերությունները նշվում են սոսկ աստվածների շարքը ավարտվելուց հետա:

Համարյա մույնը կարելի է ասել Ռուսա II-ի Կարմիր-բլուրի KYKH, 424 ծավալում արձանագրության մասին, որում կենդանիների զոհաբերությունների ժամանակ Խալդյան զենքերը անմիջապես հաջորդում են զերագույն աստվածներ Խալդիին, Թեյշեբային, Շիվինին: զերագույն դիցուհի Վարուբանին և մանավանդ նախորդում են Խալդյան տաճարին (*Ḫaldinaue KÁ*): Ի դեպ, Խալդյան զենքերը նախորդում են Խալդյան տաճարին մակ ուրարտական այլ սեպագիր տեքստերում¹⁶:

Մյուս կողմից հայտնի է, որ ուրարտական արձանագրություններում BE.LI-ին երբեմն փոխարինում է GIS II-ը: Օրինակ՝ Ռուսա II-ի Արծկեի KYKH, 415 և Կարմիր-բլուրի KYKH, 425 պակասավոր արձանագրություններում ամփայլ է մերթ kumemuse BE.LI, մերթ էլ kumemuse GIS¹⁷, իսկ Այանիսի նորահայտ արձանագրության մեջ մի դեպքում՝ TUKUL BE.LI, մյուս դեպքում՝ TUKUL^{MEŠ} GIS^{MEŠ}: Դա, անկասկած, ինքնին վկայում է, որ GIS II-ը փաստորեն մույն BE.LI-ն է: Ի դեպ երկու դեպքում էլ GIS II-ները սեպագիր տեքստերում փոքրագրված են տողավերջին: Իսկ դա նշանակում է, որ տողավերջի ազատ մնացած աննշան հատվածը հնարավորություն է ընձեռել փոքրագրելու BE.LI-ի սոսկ «կարճ» տարբերակը՝ GIS II-ը: Որոշ դեպքերում էլ հիշյալ տեքստերում մույնիսկ KÜ kumemuše-ն, այսինքն՝ «անմեղ զենքը» ամբողջական կրկնելու փոխարեն ամփայլ է սոսկ նրա KÜ «անմեղ» մակդիրը: Նույնը կրկնվում է Ռուսա II-ի Այանիսի իդենտիկ արձանագրության մեջ Kū kumemuše-ի շումերական տարբերակի դեպքում՝ Kū TUKUL, «անմեղ զենք»-ի փոխարեն՝ պարզապես KÜ «անմեղ»¹⁸:

Այսպիսով, ինչպես բացահայտվեց վերևում, շումերական TUKUL և ակկադական kakku «անմեղ զենքի» ուրարտական համապատասխանությունը հանդիսանում է kumemuse-ն: Այդ դեպքում, բնականաբար, հարց է ծագում, թե ունի, արդյո՞ք, իր ուրարտերեն համապատասխանությունը մակ շումերական GIS II և ակկադական BE.LI (^{GIS}be-le) «մարտական զենքը»: Կարծում ենք, որ այդ հարցին համարձակորեն կարելի է տալ դրական պատասխան: Ելնելով ուրարտական արձանագրությունների այդ առթիվ մատուցած հարուստ փաստական նյութից, հազիվ թե կասկած հարուցի, որ BE.LI-ի և GIS II-ի ուրարտերեն համապատասխանությունը եղել է հենց ամենուրեք հայտնի (^{GIS})šuri-ն: Դա մույնն է, ինչ խորհրդներն šauri-ն¹⁹ և հայերեն «սուր»-ը²⁰:

Ակկադա-ուրարտական BE.LI gurusiniei մման, ուրարտական GIS²¹šuri-ի մարտական զենք լինելու համոզիչ վկայություն կարելի է համարել այն փաստը, որ այդ զենքով են, իբրև նախերգանք, սկսում ուրարտական տարեգրությունները յուրաքանչյուր տարվա ռազմական արշա-

վանքները, երբ գերագույն աստված Խալդին իր զենքին (*masinie* ^{GIS}*šurie*) ամեն անգամ հայատակեցնում է բազում անհնազանդ երկրներ: Հենց այդպես է Խալդին ուժեղ, Խալդյան զենքը ուժեղ (^{GIS}*Haldi kuruni* ^{GIS}*Haldini šuri kuruni*)²¹: Այդ զենքի առջև է նաև պատերազմների ժամանակ արշավանքի օբյեկտ դարձած երկրների սարսափահար բնակչությունը փախուստի դիմում դեսի բարձրադիր լեռները (^{LU}*ŪKU* ^{LU}*surgini-kaimi* ^{SADU}*kulsaršibi šatuni* ^{SADU}*Uškiani* ^{SADU}*Baruni*)²²: Դա բավական մնան է Խալդյան այն զենքերին (^{MEŠ}*Haldinaue BE.LI*), որոնց պատվին պաշտամունքային արարողությունների ժամանակ, աստվածների հետ միասին, կատարվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների համատարած զոհաբերություններ:

Ինչ վերաբերում է *KU kumemuše* կամ *KU TUKUL* ^{MEŠ} «անմեղ զենքերին», ապա նրանք պաշտամունքային արարողությունների ժամանակ սուկ հազվադեպ հիշատակվում են մարտական զենքերի կողքին, երբեք չեն առնչվում գերագույն աստված Խալդիի անվան հետ, նրանց պատվին չեն մատուցվում կենդանիների զոհաբերություններ: Սի խոսքով, նրանք չեն հանդիսանում պաշտամունքի և ուշադրության հատուկ առարկա: Հետևաբար, ելնելով դրանից և նրանց հղված *KU* «անմեղ» մակդիրից, կարելի է ենթադրել, որ անմեղ զենքերը, ի տարբերություն *BE.LI gunušinei* ^{GIS}*šuri* մարտական զենքերի, հավանաբար հանդիսացել են արվեստի և զարդարանքի առարկաներ: Ուստի նրանց տակ, ըստ երևոյթին, ենթադրվում են զինագործության հետ առնչվող բարձրարվեստ այնպիսի առարկաներ, ինչպիսիք իրավամբ եղել են Մուսասիրի ուրարտական տաճարից մ.թ.ա. 714թ. ասորեստանցիների կողմից կոդոսյաված ոսկե և փղոսկրե սրերն ու դաշույնները, արծաթե միզակները և աղեղները²³, հնագիտական պեղումներում հայտնաբերված բրոնզե նետասլաքները՝ սեպագիր մակագրություններով²⁴ և այլն:

NICOLAY HAROUTHIOUNYAN

THE ETHIMOLOGY OF THE WORDS OF KUMEMUŠE AND BE.LI OF THE URARTIAN CUNEIFORM

Based on the use of the substantive *kumemuše* with the sumerographical epithet *KU*, the author identifies *KU kumemuše* with the sumerogram *KU.TUKUL*, attested in Urartian inscriptions and suggests for it the translation 'innocent weapon'.

On the other hand, on the basis of the Urartian epithet *gunušinei* of the akkadogram *BE.LI*. 'weapon', which is considered to correspond to Urartian *GIS šuri*, *BE.LI gunušinei* is interpreted as 'battle weapon'. It is also suggested, that the latter should be identified with the akkado-sumerographical writing *BE.LI SIKIL* and, hence, *SIKIL* should be regarded the sumerogram of Urartian *gunušinei* 'of battle'.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. W. Von Soden, AHw, I, էջ 120:
2. Н.В. Арутюнян, КУКН, 415, տողեր 4-6:
3. КУКН, 425, տողեր 5-9:
4. P. Hulin, New Urartian Inscription from Adilcevaz, "Anatolian Studies", vol. IX, 1959, էջ 192, արձանագրություն I, տող 4:
5. Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966, էջ 48:
6. Н.В. Арутюнян, КУКН, էջ 452:
7. A. Çilingiroğlu, M. Salvini, Ayanis I, Roma, 2001, էջ 257, սկզբի IV, տողեր 2-5:
8. Mirjo Salvini, Note di lessico urarteo, SMEA, XLIV/2, Roma, 2002, էջ 339-340:
9. R. Borger, ABZ, էջ 178-179 (No. 468), 317; W. von Soden, AHw, I, էջ 204:
10. R. Borger, ABZ, No. 536; W. von Soden, AHw, I, էջ 422:
11. W. von Soden, AHw, I, էջ 120:
12. R. Borger, ABZ, No. 564:
13. W. von Soden, AHw, I, էջ 204:
14. Н.В. Арутюнян, КУКН, 241G, տող 9:
15. Նույնի, КУКН, 38, տերստ I, տող 7; տերստ II, տող 10:
16. Аyanis I, սկզբի I, տող 11; սկզբի V, տող 7-8:
17. Н.В. Арутюнян, КУКН, էջ 416:
18. Аyanis I, սկզբի IV, տողեր 3-4:
19. V. Haas, Or.Ant., 11 (1973). E. Laroche, RHA, XXXV, էջ 219; М.Л. Хачикян, ХУ, էջ 48:
20. Г.А. Капанцян, О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений, Ar.Or., XVII, No. 1, 1949, էջ 371:
21. Н.В. Арутюнян, КУКН, 173, I, տողեր 17-19. 241A, տողեր 1-3, C, տողեր 19-23 և այլն:
22. Նույնի, КУКН, 241, տողեր 26-27:
23. И.М. Дьяконов, Ассирио-вавилонские источники по истории Урарту, "Вестник древней истории", 1951, № 2, էջ 331-332, § 49 (352, 367):
24. Н.В. Арутюнян, КУКН, արդարև СИ, նկար 3. արդարև СХХIV, նկար 1-2:

ՀԱՊԱՇՈՒՄՆԵՐ

КУКН — Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

ХУ — М.Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985.

ABZ — Rykle Borger, Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.

AHw – Wolfram von Soden, Akkadisches Handwörterbuch, I, Wiesbaden, 1965.

Ar.Or. – Archiv Orientalní (Prag).

Or.Ant. – Oriens Antiquus (Budapest).

RHA – Revue Hittite et Asianique (Paris).

SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).